ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IE5C-C8E5-4D32-BFEF հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/3248/02/26

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՅՑԻ ՀԻՄՔԻ ԵՎ ԱՌԱՐԿԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

13.04.2026թ. ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, դատավոր Ս. Երիցյանի նախագահությամբ (այսուհետ նաև՝ Դատարան), քննարկելով ըստ հայցի «Բիդեք» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Հայցվոր) ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատասխանող), վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Երրորդ անձ)՝ պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, քաղաքացիական գործով Հայցվորի ներկայացուցչի կողմից ներկայացված հայցի հիմքի և առարկայի փոփոխությունը թույլատրելու մասին միջնորդությունը,

ՊԱՐԶԵՑ

Հայցվորի ներկայացուցիչը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ Պատասխանողի, վեճի առարկայի նկատամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի՝ պայմանգրի միակողմանի

լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցադիմումն էլեկտրոնային համակարգի միջոցով դատարան ներկայացվել է 23.03.2026 թվականին, կազմվել է թիվ ԵԴ2/3248/02/26 քաղաքացիական գործն, որը **մակագրվել է** Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ս. Երիցյանին **24.03.2026 թվականին, ժամը 21:15-ին**, իսկ հասանելի է դարձել **25.03.2026 թվականին**:

Դատարանի 27.03.2026 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ և ՀՀ պաշտպանության նախարարությունից պահանջվել է դատարան ներկայացնել թիվ «ՓՆՄԱԾՁԲ-25-10/15-4» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Դատարանի 27.03.2026 թվականի որոշմամբ Հայցվորի ներկայացուցչի միջնորդությունը՝ հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ, բավարարվել է:

Հայցվորի ներկայացուցչի կողմից 10.04.2026 թվականին ներկայացվել է միջնորդություն՝ հայցի հիմքի և առարկայի փոփոխությունը թույլատրելու մասին:

Դատարանն, ուսումնասիրելով ներկայացված միջնորդությունը և այն համադրելով ներկայացված հայցադիմումի հետ՝ արձանագրում է հետևյալը՝

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 170-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցվորը հայցի առարկայի և հիմքի կամ դրանցից յուրաքանչյուրի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ ներկայացնում է գրավոր միջնորդություն մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն օրենսգրքի իմաստով՝ հայցի առարկայի փոփոխությունը հայցվորի կողմից պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջն այլ պահանջով փոխարինելը, պահանջը փոփոխելը կամ լրացնելն է, այդ թվում՝ պահանջների չափն ավելացնելը կամ նվազեցնելը, որը թույլատրում է առաջին ատյանի դատարանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 170-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սույն օրենսգրքի իմաստով՝ հայցի հիմքի փոփոխությունը հայցվորի կողմից հայցի հիմքում սկզբնապես դրված փաստերն այլ փաստերով փոխարինելն է, ինչպես նաև հայցի հիմքում դրված փաստերի շրջանակը ճշգրտելն է այն լրացնելու կամ պակասեցնելու եղանակով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 170-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը հայցի առարկայի կամ հիմքի փոփոխությունը թույլատրելու կամ մերժելու վերաբերյալ կայացնում է առանձին դատական ակտի ձևով որոշում, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ միջնորդությունը քննարկվել և այն թույլատրելու կամ մերժելու վերաբերյալ որոշումը կայացվել է դատական նիստում՝ գործին մասնակցող անձանց ներկայությամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 170-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայցի առարկայի կամ հիմքի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ միջնորդությունը դատարանը մերժում է, եթե այն բավարարելու

դեպքում փոփոխվում է այն իրավունքը կամ օրենքով պահպանվող շահը, որի պաշտպանության նպատակով հայցը սկզբնապես հարուցվել է, կամ քննվող գործը դուրս է գալու առաջին ատյանի դատարանի ենթակայության սահմաններից:

Վերոգրյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում Դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 170-րդ հոդվածի 5-րդ մասը հայցի հիմքի և առարկայի կամ դրանցից յուրաքանչյուրի թույլատրելիության համար սահմանել է երկու չափանիշի միաժամանակյա առկայություն՝ հայցի հիմքի և առարկայի կամ դրանցից յուրաքանչյուրի փոփոխությունը դատարանն ընդունում է, եթե չի փոփոխվում այն իրավունքը կամ օրենքով պահպանվող շահը, որի պաշտպանության նպատակով հայցը սկզբնապես հարուցվել է և քննվող գործը դուրս չի գալու առաջին ատյանի դատարանի ենթակայության սահմաններից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ հայցի առարկան փոփոխելու դեպքում պետական տուրքի գումարի չբավականացնող մասը գանձվում է հայցի առարկան փոփոխելիս՝ փոփոխված հայցի առարկային համապատասխան:

Վերոնշյալ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ հայցի առարկան փոփոխելու դեպքում սահմանված է պետական տուրքի գանձման պահանջ այն դեպքում, երբ հայցի առարկան փոփոխելու դեպքում սկզբնական հայցով վճարված պետական տուրքի գումարը չի բավականացնում: Ընդ որում, պետական տուրքը գանձվում է հայցի առարկան փոփոխելիս, հետևաբար հայցի առարկայի փոփոխության դեպքում դատարանը պետք է անդրադառնա նաև պետական տուրքի գանձման հարցին՝ հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 11-րդ մասը:

Վերոգրյալը հաշվի առնելով Դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում հայցի հիմքի և առարկայի փոփոխությունը թույլատրելու մասին միջնորդությունը բավարարելու դեպքում իրավունքի կամ օրենքով պահպանվող շահի փոփոխություն առկա չէ, ինչպես նաև քննվող գործը դուրս չի գա առաջին ատյանի դատարանի ենթակայության սահմաններից, բացի այդ հայցի նոր առարկայի շրջանակներում պետական տուրքի չբավականացնող մասը վճարվել է Հայցվորի կողմից, հետևաբար Հայցվորի ներկայացուցչի միջնորդությունը՝ հայցի հիմքի և առարկայի փոփոխությունը թույլատրելու մասին, ենթակա է բավարարման:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.5-րդ հոդվաի համաձայն՝

(...)

3. Համակարգն օգտագործող անձի համար դատական ակտը համարվում է հրապարակված (կամ կայացված), եթե այն Համակարգի միջոցով **հասանելի է**

դարձել Համակարգն օգտագործող անձին:

4. Համակարգն օգտագործող անձի համար դատական ակտը համարվում է վերջինիս ուղարկված, եթե այն **Համակարգի միջոցով հասանելի է** դարձել Համակարգն օգտագործող անձին:

5. Դատական ակտերը համարվում են Համակարգն օգտագործող անձի կողմից ստացված դրանք իրեն **հասանելի դառնալու պահից երեք աշխատանքային օր հետո**:

(...)

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.7 հոդվածի համաձայն՝ հայցադիմումի պատասխանը կամ հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդությունը ներկայացվում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Տվյալ դեպքում հայցվոր՝ «Բիդեք» ՍՊԸ-ի ներկայացուցչի միջնորդությունը՝ հայցի հիմքի և առարկայի փոփոխությունը թույլատրելու մասին, բավարարման ենթակա լինելու պայմաններում Դատարանը գտնում է, որ պատասխանող՝ ՀՀ պաշտպանության նախարարությանն և երրորդ անձ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ին պետք է տրամադրվի սույն դատական ակտը ստանալուց հետո **հնգօրյա ժամկետ**՝ փոփոխված հայցադիմումի վերաբերյալ հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 170-րդ, 188-րդ, 199-րդ և 200-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑ

1. Ըստ հայցի «Բիդեք» ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի՝ պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, քաղաքացիական գործով Հայցվորի ներկայացուցչի կողմից ներկայացված միջնորդությունը՝ հայցի հիմքի և առարկայի փոփոխությունը թույլատրելու մասին բավարարել.

Թույլատրել հայցի հիմքը **փոփոխել և լրացնել** հետևյալ բովանդակությամբ.

«2026թ. մարտի 30-ին ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ.Բրուտյանի կողմից կայացվել է թիվ 218 որոշումը (այսուհետ նաև՝ Որոշում), որով «ԲԻԴԵՔ» ՍՊԸ-ն ներառվել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Նշված որոշմամբ արձանագրվել է հետևյալը. «Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հիմք

ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանքների առկայությունը՝ հրամայում եմ ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Նույն որոշման աղյուսակի «Իրավական հիմք» բաժնում նշված է հետևյալը. «3.1.4 կետի ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար, բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը)»:

Այսպիսով, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից N ՓՆՄԱՇՁԲ-25-10/15-4 ծածկագրով պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցման /որոշման/ արդյունքում «ԲԻԴԵՔ» ՍՊԸ-ն ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ.Բրուտյանի 30.03.2026թ. թիվ 218 որոշմամբ ներառվել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Գտնում ենք, որ ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ.Բրուտյանի 30.03.2026թ. թիվ 218 որոշումը՝ «ԲԻԴԵՔ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ, նույնպես իրավաչափ չէ և հակասում է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին հետևյալ հիմնավորմամբ.

(...)

1. Նախ, ինչպես արդեն հիմնավորել ենք ներկայացված հայցադիմումով, իրավաչափ չէ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից N ՓՆՄԱՇՁԲ-25-10/15-4 ծածկագրով պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը: Համապատասխանաբար, նույն հիմնավորմամբ իրավաչափ չէ նաև ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ.Բրուտյանի 30.03.2026թ. թիվ 218 որոշումը՝ «ԲԻԴԵՔ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ: Հաշվի առնելով, որ թիվ ԵԴ2/3248/02/26 քաղաքացիական գործով ներկայացված հայցադիմումով մանրակրկիտ հիմնավորել ենք ՀՀ պաշտպանության նախարարության կողմից N ՓՆՄԱՇՁԲ-25-10/15-4 ծածկագրով պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցման անվավեր լինելու փաստը, ուստի սույն միջնորդությամբ այդ հանգամանքներին կրկին չենք անդրադառնում:

Ընդամենը նշենք, որ եթե անվավեր է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից N ՓՆՄԱՇՁԲ-25-10/15-4 ծածկագրով պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը,

ապա համապատասխանաբար, այդ հիմքով անվավեր է նաև ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ.Բրուտյանի 2026թ. մարտի 30-ի թիվ 218 որոշումը՝ «ԲԻԴԵՔ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ:

2. (...)

Դատարանին խնդրում ենք նկատի ունենալ, որ նշված ցուցակում ներառվելու համար բավարար չէ մասնակցի խախտում թույլ տալու փաստը, քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը իմպերատիվ պահանջում է նաև, որպեսզի մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում վճարած չլինի հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Դատարանի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ 20.03.2026թ. պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցմամբ ՀՀ ՊՆ նշել է, որ եթե «ԲԻԴԵՔ» ՍՊԸ-ն մինչև 2026թ. մարտի 30-ը ներառյալ վճարի պայմանագրի ապահովման գումարը՝ 76 300 000 ՀՀ դրամը և պայմանագրի որակավորման ապահովման գումարը՝ 187 037 442 ՀՀ դրամը, ապա Ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այսպիսով, պայմանագրի և որակավորման ապահովման գումարի վճարման համար սահմանվել է 2026թ. մարտի 30-ը ներառյալ:

Դատարանին խնդրում եմ նկատի ունենալ, որ հենց Պատասխանողի կողմից սահմանված ժամկետը ավարտված չլինելու պարագայում Պատասխանողը 30.03.2026թ. ընդունել է որոշում՝ «ԲԻԴԵՔ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ:

Գտնում ենք, որ նման պայմաններում խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետով սահմանված պարտադիր պահանջներից մեկը՝ սահմանված ժամկետում պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը վճարած չլինելը:

Ուստի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետով սահմանված պարտադիր պահանջներից մեկի բացակայության պայմաններում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումը իրավաչափ չէ, քանի որ հակասում է վերոշարադրված դրույթին:

3. (...)

Գտնում ենք, որ վիճարկվող որոշումը չի համապատասխանում Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված որոշման ՊԱՏՃԱՌԱԲԱՆՎԱԾ լինելու իմպերտիվ օրենսդրական պահանջին:

Մասնավորապես, որոշման մեջ ի սպառ բացակայում են պայմանագիրը լուծելու փաստական հիմքերը:

Վիճարկվող Որոշմամբ ընդամենը նշվել է հետևյալը. «Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ հիմք ընդունելով ներքոհիշյալ աղյուսակում նշված հանգամանքների առկայությունը՝ հրամայում եմ ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Իսկ որոշման աղյուսակի «Իրավական հիմք» բաժնում ընդամենը նշված է հետևյալը. «3.1.4 կետի ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար, բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը)»:

Սակայն թե ինչում է դրսևորվել պայմանագրային պարտավորությունների խախտումը, ինչ փաստական հանգամանքներում, մնում է միայն կռահել:

Մինչդեռ որպեսզի վիճարկվող որոշումը լիներ պատճառաբանված, առնվազն անհրաժեշտ էր, որպեսզի այն պարունակեր տեղեկատվություն մասնակցի կողմից դրևորած ոչ պատշաճ վարքագծի մասին, այսինքն դրանում հստակ պետք է նշվեր մասնակցի կողմից դրևորած ոչ իրավաչափ վարքագիծը, կոնկրետ այն վարքագծի կանոնը, որը խախտվել է մասնակցի կողմից դրևորած վարքագծի արդյունքում և համապատասխանաբար, գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատվիրատուի ղեկավարի որոշմամբ պետք է հստակ և կոնկրետ նշվեն մասնակցին ցուցակում ներառելու հիմքերը, որոշումը պետք է լիներ բավարար չափով որոշակի, որպեսզի դրա հասցեատերը ի վիճակի լիներ դրսևորելու համապատասխան վարքագիծ: Այսինքն՝գտնում ենք, որ անվավեր պետք է ճանաչվեն այն որոշումները, որոնք առերևույթ զուրկ են որևէ պատճառաբանվածությունից:

Ըստ Էդուարդ Աղայանի Արդի հայերենի բացատրական բառարանի՝ «պատճառաբանել»նշանակում է որևէ բանի պատճառը ցույց տալ, բացատրել, հիմնավորել, արդարացնել, որևէ բան արդարացնող պատճառներ՝ հանգամանքներ բերել, իսկ “պատճառաբանություն” նշանակում է այն փաստարկների, տվյալների ամբողջությունը, որոնք

բերվում են որևէ բան պատճառաբանելու, հիմնավորելու նպատակով:

Պատճառաբանվածության պահանջի պահպանման իրավաչափ նպատակներից հիմնականները՝ իրավական որոշակիության ապահովելն ու գնման գործընթացին մասնակցող անձանց իրավունքների պաշտպանության համար անհրաժեշտ ու բավարար պայմաններ ստեղծելը, դրանց պաշտպանությունը երաշխավորելն են, որոնք ստեղծում են իրավունքների պաշտպանություն իրականացնելու հնարավորություն՝ զերծ մնալով իրավական անորոշությունից, որը սահմանափակում է գնման գործընթացին մասնակցող անձանց իրավունքների պաշտպանության հնարավորությունները:

Դատարանին խնդրում ենք նկատի ունենալ, որ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկելու մասին որոշումը այնպիսի իրավաբանական փաստ է, որը անմիջականորեն միջամտում է տնտեսվարող սուբյեկտների տնտեսական գործունեությանը, որոշակիորեն սահմանափակելով նրանց շահույթ ստանալու նպատակ հետապնդող գործունեություն իրականացնելու սահմանադրական հնարավորությունը, քանի որ այն անմիջականորեն զրկում է մասնակցին հնարավորությունից երկու տարի ժամկետով մասնակցելու որևէ գնման գործընթացին:

Ուստի օրենսդրորեն կարևորվել է քննարկվող յուրաքանչյուր դեպքում վրա հասնող անբարենպաստ հետևանքի հիմքում ընկած իրավական և փաստական հանգամանքների հստակությունը գնման գործընթացի մասնակցի համար, և միայն նման հստակությունը և վարքագծի կանխատեսելիությունը հնարավորություն կտա վերջիններիս ապահովել իրենց՝ ենթադրյալ խախտված իրավունքի դատական պաշտպանությունը, քանի որ դատական պաշտպանության իրացումը ոչ միայն ենթադրում է դատարան դիմելու ընթացակարգային հնարավորության առկայություն, այլև այդ հնարավորության բովանդակային իրացում, որը հնարավոր է միայն այն դեպքում, երբ շահույթ ստանալու նպատակ հետապնդող սուբյեկտը իրական հնարավորություն ունենա վիճարկելու համապատասխան որոշման հիմքում որպես պատճառաբանություն նշված փաստական հանգամանքների առկայությունը, հիմնավորվածությունը և հավաստիությունը:

Դատարանին խնդրում ենք նկատի ունենալ, որ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկելու մասին որոշումը պետք է լինի պատճառաբանված այն աստիճան, որ հնարավորություն տա ինչպես դրա հասցեատիրոջը, այնպես էլ քաղաքացիական շրջանառության մյուս մասնակիցներին պարզել ու բացահայտել կատարողի կողմից թույլ տրված ենթադրյալ խախտման էությունը, բովանդակությունը և դրա հիմքում դրված հանգամանքները:

Սակայն ուսումնասիրելով որոշումը, պարզ է դառնում, որ այն չի պարունակում փաստական հանգամանքների (պայմանագրային կոնկրետ պարտավորությունների խախտման վերաբերյալ) նկարագրություն, պարզ և հասկանալի չէ, թե ինչ իրավախախտման վարքագիծ է դրսևորել ՄՊԸ-ն: Ավելին, որոշումը բավականաչափ որոշակի և հստակ չէ, և հնարավորություն չի ընձեռում կատարողի կամ ցանկացած այլ անձի համար հստակ հասկանալու, թե կոնկրետ ո՞ր պարտավորությունն է խախտվել, ի՞նչումն է դրսևորվել այդ խախտումը, ո՞րն է դրա փաստական հիմքը:

Մինչդեռ, ինչպես արդեն նշել ենք, «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պահանջը՝ որոշման պատճառաբանված լինելու մասով, օրենսդրի կողմից սահմանված պահանջ է, որի պահպանումը պատվիրատուի կողմից պարտադիր պայման է, ինչը բխում է իրավական որոշակիության սկզբունից: Ընդ որում, այդ պահանջը ձևական բնույթ չի կրում, և չի կարող պահպանված համարվել այն դեպքում, երբ թեկուզ պատվիրատուի կողմից վկայակոչվում է ինչ-որ խախտում, սակայն այն բավականաչափ որոշակի և հստակ չէ, և հնարավորություն չի ընձեռում կատարողի կամ ցանկացած այլ անձի համար հստակ հասկանալու, թե կոնկրետ ո՞ր պարտավորությունն է խախտվել, ի՞նչում է դրսևորվել այդ խախտումը, ո՞րն է դրա փաստական հիմքը»:

Նման պայմաններում խախտումը բավականաչափ որոշակի չէ, և պարզ չէ, թե Հայցվորը ինչպես պետք է կանխատեսեր և իր վարքագիծը համապատասխանեցներ ենթադրյալ խախտման կանխարգելմանը:

Այսպիսով, գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառումն իրենից ներկայացնում է մասնակցի նկատմամբ ներազդման միջոց, որն արդյունք է մասնակցի կողմից դրևորած ոչ պատշաճ վարքագծին, ընդ որում, դրանով որոշակի չափով սահմանափակվում է մասնակցի՝ տնտեսական գործունեությամբ զբաղվելու իրավունք, քանի որ վերջինս զրկվում է գնումների ընթացակարգերին մասնակցելու և դրանից եկամուտ/շահույթ ստանալու հնարավորությունից, ուստի մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատվիրատուի ղեկավարի որոշման պատճառաբանված լինելու օրենսդրական պահանջի պահպանումը չպետք է կրի ձևական բնույթ, այլ դրանում հստակ պետք է նշվի մասնակցի կողմից դրևորած ոչ իրավաչափ վարքագիծը, կոնկրետ այն վարքագծի կանոնը, որը խախտվել է մասնակցի կողմից դրևորած վարքագծի արդյունքում, և դրանց համադրության արդյունքում պատվիրատուի ղեկավարի ընդունած որոշումը, այսինքն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատվիրատուի

ղեկավարի որոշմամբ պետք է հստակ և կոնկրետ նշվեն փաստական հանգամանքները, ցուցակում ներառելու հիմքերը, որոշումը պետք է լինի բավարար չափով որոշակի, որպեսզի որոշման հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Ի թիվս վերոգրյալի՝ հարկ ենք համարում նշել, որ որոշման պատճառաբանված լինելու օրենսդրական պահանջը ուղղակիորեն բխում է ՀՀ սահմանադրությամբ երաշխավորված իրավական որոշակիության սկզբունքից, ինչը տվյալ դեպքում նույնպես խախտվել է:

(...)

4. Դատարանին խնդրում են նկատի ունենալ նաև հետևյալը. Որոշմամբ արձանագրվել է հետևյալը. «Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանքների առկայությունը՝ հրամայում եմ ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Այսպիսով, չնայած «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Պատասխանողը ընտրել է իրավական ակտի ճիշտ ձևը (այդ մասով դատարանների կողմից կայացված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի արդյունքում), այսինքն ոչ թե հրաման, այլ որոշում, սակայն «Որոշեցի» մասում կրկին առկա է սխալ. ՈՐՈՇԵՑԻ ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, փոխարեն ՀՐԱՄԱՅՈՒՄ Է ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում», ինչը անթույլատրելի է որոշման առկայության պարագայում:

5. Դատարանին խնդրում ենք նաև նկատի ունենալ նաև հետևյալ կարևոր հանգամանք.

Թիվ ԵԴ2/3248/02/26 քաղաքացիական գործով «ԲԻԴԵՔ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայցադիմումը Դատարանի կողմից վարույթ է ընդունվել 27.03.2026թ., և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում (արտատպումը կցվում է):
(...)

Դատարանին խնդրում ենք նկատի ունենալ, որ N ՓՆՄԱՇՁԲ-25-10/15-4 ծածկագրով ընթացակարգը կասեցված լինելու և N ՓՆՄԱՇՁԲ-25-10/15-4 պայմանագիրը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից միակողմանի մասնակի լուծելու մասին որոշումը դատական կարգով բողոքարկված լինելու պարագայում, ՀՀ

պաշտպանության նախարարի տեղակալ Կ.Բրուտյանը ոչ իրավաչափորեն 30.03.2026թ. ընդունել է թիվ 218 որոշում՝ «ԲԻԴԵՔ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ:

Վերոհիշյալը, Դատարանի կողմից 27.03.2026թ. քաղաքացիական գործը վարույթ ընդունելու պարագայում, հանդիսանում է ՀՀ քաղ. դատ. օր-ի 234.11 հոդվածի 1-ին մասի պահանջների խախտում, ինչի արդյունքում ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ.Բրուտյանի 30.03.2026թ. թիվ 218 որոշումը անվավեր է նաև այդ հիմքով:

Գտնում ենք, որ վերոհիշյալ փաստական հանգամանքներում N ՓՆՄԱՇՁԲ-25-10/15-4 պայմանագիրը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից միակողմանի մասնակի լուծելու արդյունքում ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ.Բրուտյանի 30.03.2026թ. թիվ 218 որոշումը՝ «ԲԻԴԵՔ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ, իրավաչափ չէ, քանի որ այն ընդունվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության վկայակոչված նորմերի խախտմամբ: (...)»:

Թույլատրել հայցի առարկան **փոփոխել և լրացնել** հետևյալ բովանդակությամբ.

«2. Անվավեր ճանաչել ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ.Բրուտյանի 30.03.2026թ. թիվ 218 որոշումը՝ «ԲԻԴԵՔ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ:»

2. Պատասխանող՝ «ՀՀ պաշտպանության նախարարությանն և երրորդ անձ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ին տրամադրել սույն որոշումը ստանալուց հետո հնգօրյա ժամկետ՝ փոփոխված հայցադիմումի վերաբերյալ հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ Digitally signed by YERITSYAN SARGIS 3207830072 Date: 2026.04.13 14:04:15 AMT **Ս. ԵՐԻՑՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am